ՖԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՒ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼՈՒԹԻՆՑ

Ե. ՏԱՐԻ, ԹԻՒ 14. **1847** ՅՈՒԼԻՍԻ 15.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Խրատ ծնողաց։

«Պարտական են քրիստոնեայք սրբութեամբ մնուցանել զտղայս իւրեանց. և զգոյշ կենան 'ի մկրտութեան օրէն մինչև 'ի կատարել հասակին։ Այնչդեռ փոքր է և յորժամ զգայ, և զբար և զբարի իմանայ, ըզխաչ 'ի յերեսն հանելն ուսուցանեն. և երբ 'ի յոտն ելանէ՝ զծունր ածելն. և յորժամ 'ի խօսք գայ՝ զհաւատոյն դաւանութիւն ուսուցանեն, զայն զոր կնքահայրն ասաց 'ի ժամ մկրտութեանն՝ ուսուցանեն որ ինքն իւր բերանովն ասէ տղայն։ Լդրեցն 'ի շուրջ գայ 'ի վերայ ժողովրդեանն և ասել տայ զայս նորակնունք մանկանց։

Յեօթն տարուոյն 'ի վեր՝ 'ի խոստովանութիւն մեղաց սովորի տղայն. վասն այսորիկ պարտ է ծնողացն ըզգաստ և պատրաստ լինել և սրբութեամբ պահել զտղայն, խնամ ածել և պահել 'ի չար տեսութեանց և 'ի լսելեաց. ոչ թողուն որ վայրապար շրջին, որ տեսանեն և լսեն և ուսանին զմեղս, և ծնողք լինին պարտական չարեաց տղայոցն յահեղ դատաստանին Քրիստոսի։ Զի սուրբ Բարսեղ կեսարացին կանոն եդեալ է, թէ ծնողքն զիւրեանց զաւակաց զպիղծ գործն տեսանեն և խնայեն 'ի նոսա և ծածկեն վասն ամօթոյն, մեղք և չարիք նոցա 'ի գլուխ նոցա եղիցին, և եօթն ամ ապաշխարեսցեն. վասն զի երեք իրաց լինի չարութիւն, և մեղքն բնական է 'ի մարդն. առաջին 'ի խառնուածոյ մարմնոյն, երկրորդ 'ի չար սովորութեանց, երրորդ 'ի յանգիտութենէ։ Զի թէ 'ի չարն վարժի և զվատթարն լսէ և տեսանէ և ուսանի, յաղթի և ոչ կարէ ախտիցն ընդդիմանալ. և թէ 'ի բարի ուսմանէ անիրատ է՝ միտքն խոպանանայ, և որպէս անպիտան երկիր փուշ և անօգուտ բերս բուսուցանէ. վասն որոյ պարտ է զի մինչդեռ տղայ է՝ խնամածել պահել և 'ի բարին վարժել։ Զի տղայի միտքն որպէս յատակ հայելի է,

մի թողուր որ անխրատ վարժի, որ մեղաց ժանգն 'ի վերայ չնստի և չապականէ։ Տղայի միտքն որպէս զկակուղ մոմ է. զբարի խրատն և զիմաստութեան ուսումն դիր 'ի վերայ մատնեհար, որ այլ պիղծ և վատթար իւրք չկերպարանի 'ի միտքն։ Տղայի միտքն յստակ ակն է աղբեր ջրոյ, մի թողուր Ճապաղի կամ ցամաքի, և դառն և աղտաղտուկ և օտար ջուր 'ի ներքս մտանէ և խառնեալ պղտորի. այլ զոր օրինակ զջուրն յակնէն եթէ ոք կամի 'ի պէտս տանել ըմպելոյ և կամ զանդաստանս և զայգիս ջրելոյ, ագուգով և փողրակով պնդէ և հաւաքէ զի մի Ճապաղի և կամ հեղեղաբեր օտար ջուր 'ի ներքս խառնի, այսպէս և ըզմիտս տղային որպէս փողրակով յամենայն կողմանց պնդել պիտի ուսմամբ աստուածային օրինացն, իմաստութեամբ հանճարոյ և աստուածպաշտութեան խրատովն, զի մի ելեալ միտքն Ճապաղի ընդ զգայարանսն 'ի տես աչացն և 'ի լսել ականջացն, յորկորամոլութիւն կամ յարբեցութիւն և կամ յայլ գործս վնասու, և կամ օտար և ժանդ և դառն ջրոյ նման գործք պղծութեան կամ ձայնք և երգս գուսանական և խօսք և բանք աղտեղի մտեալ ընդ ականջն, կամ գարշ և անպատեհ տեսութիւն ընդ աչսն, և խառնեալ պղտորեն զյստակ և զսուրբ միտսն, և այնպէս անպտուղ առնեն։ Այլ այսքան յաղագս սնընդեան և խրատու և ուսման տղայոց. զոր և աստուածային առաքեալն Պօղոս պատուիրէ. «Եղբք, սիրով խրատեցէք զորդիս ձեր և սնուցէք սրբութեամբ և երկիւղիւն Աստուծոյ»։

ՅՈՎՀ. ԵՐԶՆԿԱՑԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղեքսանդրիոյ փարոսը։

ՓԱՐՈՍՆԵՐՈՒ վրայ ուրիշ անգամ ալ համառօտ տեղեկութիւն մը գրեր էինք Ռազմավիպիս մէջ[1]. հոս ամենէն առաջինն ու անուանին քիչ մը աւելի կ'ուզենք ստորագրել, այսինքն Աղեքսանդրիոյ փարոսը՝ որ աշխարհիս եօթը հրաշալեաց մէկը սեպուած էր ատենով։

Աղեքսանդրիա[2] քաղաքին հիմնարկութիւնը Քրիստոսէ 331 տարի առաջ եղած է, և հիմնադիրն է մեծն Աղեքսանդր մակեդոնացի, որ իրեն բարակամտութեամբը գուշակեր էր թէ որչափ կրնայ ծաղկիլ ատենով ան քաղաքը վաճառականութեան մէջ՝ այնպիսի յարմար դիրք ունենալովը։ Աղեքսանդրի մեռնելէն ետև իր ընդարձակ տէրութիւնը գլխաւոր զօրապետներուն մէջ բաժնուեցաւ. ասոնցմէ Պտղոմէոս Ա Պ՝ ագոսի որդին Եգիպտոսի տիրեց, ու քառասուն տարի թագաւորելէն ետքը՝ աթոռը տուաւ իր որդւոյն Պտղոմէոսի Բ, որ իր քրոջը վրայ մեծ սէր ունենալուն համար Փիլադեղփոս այսինքն Եղբայրասէր ըսուեցաւ։ Ասոնք հայր ու որդի մեծ ջանքով առաջ տարին Եգիպտոսի մէջ Յունաց լեզուն, գիտութիւններն ու արուեստները. միանգամայն վաճառականութիւնն ալ շատ ծաղկեցուցին, գիտնալով որ ժողովրդոց հարստութեան աղբիւրն ան է. ուստի Աղեքսանդրիա քաղաքը մեծցընելէն ու զարդարելէն զատ՝ Պտղոմէոս Բ շինեց անոր նաւահանգստին բերանը նաև Փարոս ըսուած մեծ ու փառաւոր լապտերը։ Կ'ըսեն թէ աս լապտերին շինութեանը համար ու-

1 Ա հատ. 94։ 2 Իսկենդերիէ։